ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

29.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 122/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 09.12.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-122/16 բողոք) և կից փաստաթղթերը, «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը և ԳԲԽ-122/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 27.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 09.12.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի կողմից գրասենյակային կահույքի ձեռքբերման

նպատակով հայտարարված թիվ «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին:

Բողոքով նշվել է, որ «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի կողմից գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի 29.11.2016թ-ին տեղի է ունեցել հայտերի բացման նիստը: Սույն ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ն, սակայն ընթացակարգի գնումների համակարգողը փորձել է չգրանցել հայտը՝ պատճառաբանելով, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հակադարձել է համակարգողի նման մոտեցմանը նշելով, որ Ընկերությունը ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ի վերջո գնումների համակարգողը գրանցել է մեր հայտը գրանցամատյանում, սակայն հայտերի բացման նիստում «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը չի բացվել:

Ընկերությունը, մեջբերել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը և խնդրել է դադարեցնել և չեղյալ հայտարարել «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգը:

Ընկերությունը, ի լրումն ԳԲԽ-122/16 բողոքի, 27.12.2016թ. հայտնել է, որ բացի բողոքում բերված պահանջներից՝ խնդրում է «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով ընթացակարգը համարել ապօրինի և պատվիրատուի՝ ի դեմս «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի և «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ի,«Զորաշեն» ՍՊԸ-ների միջև կնքված պայմանագրերը չեղյալ համարել (համարել ուժը կորցրած):

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 23.12.2016թ. ժամը 17:45-ին ԳԲԽ-122/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

2. «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան»ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Կենտրոնը 13.12.2016թ.-ին Պատվիրատուին ուղղարկված գրությամբ՝ խնդրել էր եռօրյա ժամկետում ներկայացնել «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն 20.12.2016թ. թիվ 1/321 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից 02.11.2016թ. ստացվել է թիվ 03/73-3/24804-16 գրությունը՝ ըստ որի անհրաժեշտ էր ՀՀ ֆինանսների նախարարությանը տեղեկատվություն ներկայացնել «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 20.02.2016թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում գնումների գործընթացին մասնակցելու հայտեր ներկայացնելու դեպքում՝ վերջինիս համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ն 2016թ. դեկտեմբերի 1-ին տեղեկացրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն գնումների գործընթացին հայտեր է ներկայացրել:

Պատվիրատուն ներկայացրել է նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ ներկայացրած բողոքին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և 16.12.2016թ. Պատվիրատուի և «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը:

3. ԳԲԽ-122/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 27.12.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի 09.12.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել:

4. ԳԲԽ-122/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-122/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի կողմից գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

2. Գնահատող հանձնաժողովը՝ 29.11.2016թ. 16:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.1 կետով որոշել է՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացված հայտը վերադարձնել հայտերի բացման նիստում՝ հիմք ընդունելով լիազոր մարմնի N 570-1774 գրությունը, որին կցված է եղել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալի 2016թ. նոյեմբերի 02-ի թիվ 03/73-3/24804-16 գրության պատճենը:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալի 2016թ. նոյեմբերի 02-ի թիվ 03/73-3/24804-16 գրության համաձայն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից խախտում թույլ տալու պահից՝ 20.02.2016թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացելու դեպքում՝ անհրաժեշտ է դրա մասին տեղեկատվություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս Ցուցակում ներառելու համար:

4. ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2016թ. թիվ 03/73-3/25045-16 գրության հիման վրա՝ Կենտրոնի 22.11.2016թ. 296Լ հրամանով «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար ստեղծվել է ՍՑ-ԳԲԽ-87/16 բողոքը քննող հանձնաժողով և նշված բողոքով 15.11.2016թ. (հայտը ներկայացնելու օրը) դրությամբ որոշում կայացված չի եղել և Ընկերությունը ներառված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 09.12.2016թ. ներկայացրած բողոքը, 27.12.2016թ. ԳԲԽ-122/16 բողոքի վերաբերյալ գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարանի «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով Ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի 09.12.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մասնակի բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված ցուցակը հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո, գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով՝ ելնելով սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված պայմանների խախտման ծանրությունից:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-ւդ մասի 7-րդ կետի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 21-րդ գլուխը սահմանում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու, բողոքի արդյունքում որոշում կայացնելու կարգը և պայմանները:

Վերը շարադրված իրավանորմերից ուղղակիորեն բխում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում բացառապես գնումների բողոքարկման խորհրդի որոշմամբ:

Խորհուրդը արձանագրում է, որ 15.11.2016թ. (հայտը ներկայացնելու օրը) դրությամբ առկա չի եղել գնումների բողոքարկման խորհրդի որոշում՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, հետևաբար 15.11.2016թ դրությամբ «Ֆոտոն»ՍՊԸ-ն ներառված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ավելին, Ընկերությունը ընդգրկված չէ www.gnumner.am ինտերնետային կայքում զետեղված «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից վկայակոչված ՀՀ ֆինանսների նախարարության 2016թ. նոյեմբերի 02-ի թիվ 03/73-3/24804-16 գրությանը, ապա հայտնում ենք, որ նշված գրությունը չի կարող ծառայել որպես հիմք «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացված հայտը վերադարձնելու համար, քանզի նշված գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը ընդամենը հայտնել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու պահից՝ 20.02.2016թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացելու դեպքում՝ անհրաժեշտ է դրա մասին տեղեկատվություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ***վերջինիս Ցուցակում ներառելու համար:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացված հայտը վերադարձնելով, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերը, ուստի բողոքը պետք է բավարարել.

- դադարեցնել «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը.

- դադարեցնել «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը.

- պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգը դադարեցնելու և չեղյալ հայտարարելու պահանջների վերաբերյալ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին 09.12.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել.

- դադարեցնել «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը.

- պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ «ԵրՄՄԳ-ՇՀԱՊՁԲ-15/13-16/8» ծածկագրով ընթացակարգը հայտարարել ապօրինի:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամ՝ **Վիգեն Աբգարյան**